

ТОВМА МЕЦОПЕЦИ. История Тимурленга и его преемников. Перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтян. Ереван, Изд. “Наири”, 2005, 155 с.

ԹՈՎԱՄԱՆ ՄԵԾՈՓԵՑԻ. Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, թարգմանությունը գրաբարից, առաջարանը և ծանոթագրությունները Ք. Սէր-Դավթյան. Երևան, «Նախիք» հրատ., 2005, 155 էջ:

Միջնադարյան հայ պատմագրությունն ուժ միայն նեղ հայազիտական արժեք, այլև միջազգային որոշակի նշանակություն: Այդ է վկայում ֆրանսիացի հայագետների այն ջերմ վերաբերմունքը, որի շնորհիվ արդեն XIX դարում՝ սկսած առաջին նշանավոր ֆրանսիացի հայագետից՝ Սեն-Մարտենից, հայ պատմիչների երկերի բնագրերը սկսում են թարգմանվել ֆրանսերեն: Այդ իննդրում հատկապես մեծագույն ծառայությունները ունեն Վիկտոր Լանգորտան, Մարի Ֆելիփիստ Բրոստեն, Էդուարդ Շոլովրիեն, բելգիացի Ֆելիքս Ներ և ուրիշներ<sup>1</sup>: Նոր ժամանակներում քաղման այլ լեզուներով է թարգմանվել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Այն ֆրանսերեն թարգմանել է Ժան-Դիել Մահեն, իսկ անգլերեն՝ Ուորերուն Թոմսոնը:

Հայ պատմիչները ուսւերեն են թարգմանվել դեռևս XIX դարից սկսած: Այդ հարցում մեծ ծառայություններ ունեն Սկրտիչ Էմիլը և Քերովիք Պատկանյանը: Հայ պատմիչների միջազգայնացման գործում այսօր Հայաստանում տարփում են որոշակի աշխատանքներ: Նրանց մի մասի նորացված ուսւերեն թարգմանությունները դրա առհավատյան են: 2005 թ. դեկտեմբերին լույս է տեսել Թովմա Մեծովեցու «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց» երկը, որը գրաբարից ուսւերեն է թարգմանել Քնարիկ Տէր-Դավթյանը՝ աշխատասիրությանը կցելով համապատասխան ծանոթագրություններ և առաջարան: Առաջարանում թարգմանիչը ներկայացնում է, թե ովքեր են գրապել Թովմա Մեծովեցու երկով, ինչ լեզուներով է այն թարգմանվել, բանասիրական ու գրականագիտական ինչ մեկնությունների է ենթարկվել: Առաջարանը ներկայացնում է մի ուշագրավ փաստ. 1998-ին Աշխարադում Թուրքմենստանի Ձեռագրերի ազգային ինստիտուտը Սաշտոցի անվան Սատենադարանի հետ համատեղ հրատարակել է ժողովածու՝ նվիրված թուրքմենական հին պետություններին (ԽՈՐՌ-ԽՏ՛ԼԱԳ, ԸԱ-ԽՏՎԱԳ): Այդ ժողովածուի մեջ զետեղվել են հատվածներ Թովմա Մեծովեցու երկից: Ժողովածուն կազմել, առաջարանը և ծանոթագրությունները գրել է պատմաբան, Մատենադարանի փոխտնօրեն Վարդան Գրիգորյանը, թարգմանությունը գրաբարից կատարել են Քնարիկ Տէր-Դավթյանը և Հիրիկ Անտոնյանը, ժողովածուի խմբագիրներն են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սեն Արևատյանը ու Աննակուրբան

<sup>1</sup> Shéron Martin. Mémoires historique et géographique sur l'Arménie. T. I, Paris, 1818, t. 2, 1819. Victor Langlois. Collection des historiens anciens et modernes de l'Arménie. T. I, 1867, T. II, 1869; M. Brossat. Notice sur l'historien arménien Thoma Ardzrouni, X<sup>e</sup>s., SPb, 1862; Histoire de la Siouni par Stepanos Orbélian, t. I SPb, 1864; Notice sur l'historien arménien Mkhitar d'Airivank, B.Ac., t. VI, 1863; Etudes sur l'historien arménien Mkhitar d'Airivank, XIII<sup>e</sup>s., I et II p., de la création du monde au commencement de l'ère chrétienne, III partie, jusqu'en 1289 après J.C., B.Ac., t. VIII, 1865; Avril, Edutes sur l'historien arménien Oukhtanés, X<sup>e</sup>s., SPb, 1868; Deux historien Arméniens Kiracos de Gantzag, XIII s., Histoire d'Arménie, Oukhtanés de Ourha, X s., Histoire en trois parties, SPb, 1870; Collection des historiens Arméniens, t. I SPb, 1974, t. II, SPb, 1876; E d. Dulauroir. Bibliothèque historique Arménienne ou Choix des principaux historiens Arméniens traduits en Français. Paris, Londres, 1859; F. Nève. Etude sur Thomas Medzoph et sur son histoire de l'Arménie au 15-em s. Louvain, 1855.

**Աշիբովը:** 1999-ին Թովմա Մեծոփեցու պատմության քննական բնագիրը, որը տարիներ առաջ պատրաստել էր ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը, լրայս է տեսել Երևանում: Այդ քննահամեմատական բնագիրը աչքի է ընկնում, բայց առաջարանի հեղինակի, գիտական բարեխողակրանում է, որ 1860-ին Փարիզում լրայս տեսած գրաքարյան բնագիրը ունի լուրջ թերություններ: Իսկ աղաղակող սխալներ կան Բաքվում 1957-ին լրայս տեսած «Ֆոմա Մեծոպսկի. Իстория Тимура-Ланка и его преемников. Перевод с армянского на русский Т. И. Тер-Григоряна. Редактор А. А. Баграмян» թարգմանության մեջ: Ք. Տեր-Դավթյանը խոսուն փաստերով ներկայացնում է վերոհիշյալ գործում S. Տեր-Գրիգորյանի կատարած թարգմանական սխալները, որոնք, հավանաբար, գրաքարյունուն լավ չտիրապեսերուց են առաջացել: Այսպես, օրինակ՝ «Օտքավ своего тестя ишхана Пешгена – в тексте: Դեղ մահու ետ իշխանին Պէշգենի (ЛХ, 203-204). В переводе Тер-Григоряна: дал страну ишхану Пеггину (с. 82)» (էջ 132) կամ «Богатых – в тексте: մեծամեծаин (ЛХ, 154), мецамең – имущий, богатый, вельможа. У Тер-Григоряна – взрослыи (с.75)» (էջ 129): Թարգմանության հեղինակն առաջարանում նշում է Արշակ Մադոյանի Թովմա Մեծոփեցու երկի աշխարհաբար թարգմանության մասին (2003 թ.), ինչպես նաև նշում, թե այդ երկը որպես XV դարի հայ միջնադարյան արձակի եղակի նմուշ է գնահատված Հենրիկ Բախչինյանի՝ 2004-ին լրայս տեսած «XV դարի հայ գրականությունը», հետազոտության մեջ: Առաջարանում հիշատակում կա նաև բելզիացի հայագետ Ֆելիքս Նևի կատարած՝ Թ. Մեծոփեցու երկի ֆրանսերեն թարգմանության մասին:

Ք. Տեր-Դավթյանը մանրամասներ է հաղորդում 1957-ին լրայս տեսած Թովմա Մեծոփեցու պատմության ադրբեջաներեն թարգմանության վերաբերյալ, որը խիստ պակասավոր է, և նրանում խաթարված է հայերեն բնագրի ամբողջական պատկերը: Զարմանալի չէ, որ ադրբեջաներեն թարգ-

մանության մեջ կրասովել են հատկապես այն հատվածները, որոնք վերաբերում էին Հայաստանի պատմական անցյալին, հատկապես հայոց եկեղեցուն ու նախարարական տներին, Հայաստանի վանական դպրոցներին ու կրթամշակութային օօգիսներին: Ամբողջովին դուրս են թողնված Թովմա Մեծոփեցու երկի այն հատվածները, որոնք ներկայացնում են Հայաստանի հոգևոր կյանքի լուսավոր դեմքերին, նշանավոր գիտնականներին ու մանկավարժներին՝ Հովհան Որոտնեցուն, Գրիգոր Տաթևացուն, Գրիգոր Խաչեցուն և այլոց, ինչպես նաև Տաթևի համալսարանին, Մեծոփի և Ասպարունիսի բարգավաճառայոցներին: Բնականաբար, այս բացընդուների հետ Թովմա Մեծոփեցու երկից դուրս են մնացել Հայաստանի համար բախտորոշ պատմական իրադարձությունները, որոնց հետևանքով մեծ կորուստներ ու գրկանքներ են կրել երկրի հայ բնակչները:

Ք. Տեր-Դավթյանը մեծ փաստակ ունի գրաբար բնագրերի ոռուսերեն թարգմանությունների գործում: Հատկապես հաջողությամբ թարգմանել է հայ միջնադարի հին ու նոր շրջանի սրբախոսությունը ներկայացնող վկայաբանություններն ու վարքերը: Նրան քաջածանոթ է Թովմա Մեծոփեցու վարքը և նրա ապրած ժամանակաշրջանը. առաջարանում բանասերը ներկայացնում է Թովմա Մեծոփեցու կենսագրությունը: Թովմա Մեծոփեցին բացառիկ փաստեր է հաղորդում Տաթևի համալսարանի և Գրիգոր Տաթևացու մասին, որին աշակերտելու բախտավորություն է ունեցել: Շեշտվում է հատկապես Թովմա Մեծոփեցու գործուն մասնակցությունը 1441-ին կաթողիկոսական աթոռը Կիլիկիայից վերստին Մեծ Հայք՝ Էջմիածին, վերադարձնելու գործում: Առաջարանում խոսուն մեջբերումներ կան պատմիչի երկի այն հատվածներից, որոնք ունեն ինքնակենացքական բնույթ կամ տպավորիչ ու անաշատ ներկայացնում են ականատեսի պատումն իր ապրած ժամանակի վերաբերյալ:

Ք. Տեր-Դավթյանը գրքին կցել է շահեկան ժամանոթագրական բնույթը կամ տպավորիչը ու անաշատ ներկայացնումները, որոնք բանա-

սիրական հարստություն են ներկայացնում: Լիմ կղզու մասին խոսելիս ներկայացնում է Լիմի վանական միաբանության դերը, կարևոր գրչության կենտրոն լինելը: Միայն Սաշտոցի անվան Սատենադարանում այժմ պահպում են Լիմ անապատից բերված 306 ձեռագիր մատյաններ: Ծանրագրությունները մանրամասն են և ուսուցողական: Ներ անվան համար ընդունում է Ներոն կայսեր անունից առաջացած լինելու՝ նախորդ բանասերների տեսակետը, մեկնում է Գրիգոր Տաթևացու աշխատությունների իմաստները, արտաքին և նուրբ գրոց միջնադարյան ընկալումները, Աղվանքի պետությանը Մեծ Հայքի Ռւտիք և Արցախի նահանգների միացվելը Սասանյանների կողմից՝ մարզպանություն հիմնելու նպատակով, ներկայացվում է Վան քաղաքի ուրարտական անցյալը մինչև 1915 թ. ազգակործան եղեռնի ժամանակ հայերի դիմադրությունն ու հերոսամարտերը, տրվում են Թովմա Մեծոփեցու երկում եղած պատմական դեմքերի և աշխարհագրական վայրերի համառոտ

բնութագրականները և այլն: Գրքի վերջում (էջ 134-137) դրված է բացատրական բառարան, որը բարզմանիշն իրավամբ կոչել է «Ըլոսարий» և ոչ թե «Словарь», այսինքն՝ իին բառերի բառարան: Նրանում բացատրվում են Թովմա Մեծոփեցու երկում եղած աղա, ազատ, ամիր կամ էմիր, արևորդի, բեկ կամ բեյ, զանձ, դահեկան, դանիշման, կյուղապատ, մուֆտի, փառիշահ, ուարունապետ, սուֆի, տաղ, խան, խանում, խոջա և այլ բառերի իմաստները:

Գիրքն ունի օգտագործված գրականության ցանկ, անվանացանկ, աշխարհագրական տեղանունների և ազգագրական անվանումների ուղեցույցեր:

Հարկ է երախտագիտության խոսք ուղղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ սրբազնագույն և վեհափառ Ամենայն հայոց կաթողիկոսին՝ գրքի հրատարակությունը հովանավորելու և գովեստի խոսք ասել «Նայիրի» հրատարակչությանը՝ հայգիտական նման ձեռնարկներ իրականացնելու:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ